

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐԹ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 19

6 ՄԱՅԻՍ 1900

Մասիս շաբաթաբերքի սարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի թե՛ Կ. Պոլսոյ եւ թե՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 Ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առօրէ, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխաշիշի, Պահչե-Դաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթի, Սալայ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն մոտ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԻ

درعليه ده غلطه ده «ماسيس» غزته سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Ղալաթիս, Նորասունկեան Խան, Թիւ 13

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



ՌՕՍՒԱ — ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ	34,775,642 ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Քարաիիին վրայ, Մախասան հին տեղը

Ընդհ. Քննիչ
Ա. ՀԻՐՈՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵՆ

ԻՍԹԸՐՆ ԳԱՈՒՆԹԻՍ

ԱՆԳԼԻՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԵՄ ՀՐԴԵՀԻ (Ի ՀԸԼԼ)

Նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրուին ամեն տեսակ շէնք, կարասի, ապրանք

ԳՐԱՄԱԳԼՈՒԽ 7,250,000 ՖՐԱՆՔ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, Թիւ 53, 54, 55, 56

Ընկերութեան ղրաւատուէն է ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

“ԱԼԼԷԱՆՁԱ”

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎԱ)

ԳՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ԵՐԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն, եւ որոշ պայմանաժամերով, օժիտի, ցկեանս կամ ժամանակաւոր եկամուաներու, հետեւեալ առաւելութիւնները ընծայելով.

Մէկ տարուան ապահովագրութենէ ետքը, երբէք ապահովագիրները (քօլիս) չեն ջնջուիր, մենամարան ու անձնապահովութիւնը կ'երաշխաւորուին, ըսաւ ո եւ է արհեստի կամ ուղեւորութեան համար յաւելուածական ապահովագիրն (քոլիւ) չի պահանջուիր, ապահովագիրներու վճարումը դադարելու պարագային՝ ապահովագիրը կը գնուի ըստ նշանակեալ արժէքին, ապահովագրի ծախք չափուիր, ընկերութեան շահերուն կը մասնակցի ապահովագրողը:

Արկածեալներու դէմ ապահովագրութիւն մահուան կամ աշխատելու անկարողութեան պարագային ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ:

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի, ձիու, կառքի, թրամուէլի, երկաթուղիի, շոգենաւի, առգաստանաւի, միջատներու խայթուածքի եւ ապահովագրողին արհեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ո եւ է արկածի դէմ:

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը, ինչպէս նաեւ մարդ մը կամ ինչք մը ազատելու առթիւ պատահած ո եւ է արկած:

Ընկերութեան պանքան է՝ ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, Թիւ 53, 54, 55, 56

ՄԱՍԻՆ

49րդ ՏԱՐԻ


— 6 ՄԱՅԻՍ 1900 —

ԹԻՒ 19

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լքուած ասպարեզ մը ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ, — Մեկնութեան փորձեր, Խնջ կրնեն մեր շրջանաւարտ աղջիկները, ԱՐՄԻՆԵ, — Աղօթքը (Քերթուած), Մ. ԱՃԼՄԵԱՆ, — Դպրոցական առողջապահութիւն, Դպրոցի նիւանդութիւնները, ՏՈՒԹ, ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄԵԱՆ, — Ներքե (Սերերգ), Ա. ՔԱՐԲՈՒԹԼԵԱՆ, — Արուեստահանդէսը Բարիգեան Նօթեր, ԱՐՈՒԵՍԱՍԷՐ, — Սովորիկէսի դազաղը, Մ. ՆԱԹԱՆԵԱՆ, — «Մասիս»ի Յուշատետրը:

ԼՔՈՒԱԾ ԱՍՊԱՐԷԶ ՄԸ



Վաճառականի գրագրութեան կամ զպրօցական պաշտօնները չեն եղեր միայն որոնք խելոյն թեկնածուներ կը գտնեն մեր մէջ, ինչպէս կը հաւատայինք մինչեւ հիմա: Բոլորովին ներհակ ու լքուած ասպարեզ մը, գերասանութիւնն ալ, հրապոյրի հետք մը կը պահէ եղեր տակաւին այն կիներուն պէս որոնք՝ փայլուն անցեալէ մը ետքը՝ դեռ կը գտնեն մէկ-երկու համակրող որոնք իրենց շուրջը կը դառնան, տարտամբէն յափշտակուած անցեալ գեղեցիկութեան մը վրայ դրուցածներէն: Մեր հինցած բեմին ծառայելու պատրաստուողներն ալ երեք երկուսորդներ են որոնք, պատասխանելով Մնտիկեանի ծանօթ հրաւերին, այս պահուստե

սական կարճ դասընթացք մը կը բոլորեն բազմապատակ դերասանապետին ձեռքին տակ, վաղը միւս օր գործնականին անցնելու համար: Ու մի՛ կարծէք որ դերերնին հասկնալու եւ սերտելու անկարող աղաք լլլան ասոնք, ապրուստ մը ճարելու համար դերասան ըլլալու ըզձացող, ինչպէս գիպուածարար ու կերչի մը կամ գերձակի մը խանութը աշխատութեան պիտի մտնէին: Անոնցմէ մէկը ազգ. մասնաւոր վարժարանի մը շրջանաւարտներէն է, ըսին, ու միւսներն ալ քիչ շատ

կրթութիւն առած: Մէջէնէն բարեկազմ եւ բնասարգ մը կը պատրաստուի jeune premierի հրապուրիչ բայց դժուարին դերին, ուրիշ մը հակասակորդի, երրորդն ալ կատակերգակի դերերուն: Այս բեմական «ուսանողները» կանուխէն բաւական ճաշակ ու դատողութիւն ունենալու են՝ արուեստին է՛ն կարեւոր ճիւղերը բնորոշու համար, եթէ ընտրութեան հսկը թողած չեն իրենց վարպետին որ չտառանալով այսքան տարիէ ի վեր խաղեր թարգմանելէ, անոնց ներկայացումը կազմակերպելէ, քաղքէ քաղքէ՝ արուարձանէ արուարձան տեղագոյնուելէ իր խումբին հետ, դասախօսութիւն ալ կը հաստատէ:

Թերեւս պզտիկ դժգոհութիւն մը, — եթէ ոչ գայթակղութիւն, — առաջ բերէ նիւթիւ ընտրութիւնը այն միջոցին երբ մանկավարժական կիրականօրեայ գնասխօսութիւնները իրենց բեղմնաւոր շրջանին մէջ կը գտնուին, եւ այս էջերուն մէջ դերասանական դասախօսութեամբ կը գրառինք: Բայց առաջիններուն կարեւորութիւնը բնականաբար զնահատելը պատճառ մը չէ վերջինը արհամարհելու: Ընդհակառակը, պատեհութիւն ու այժմութիւն ալ ունի անիկա, երբ թէ՛ հրանէն, թէ՛ փրկէն,

Նախընթացին յաջորդարար այնքան չլացուցիչ լուրեր կը հասնին amateur պատանիներու եւ արուեստով դերասաններու ու դերասանուհիներու յաջողութեանց վրայ :

Մնակեանին մարզած երիտաւարներուն մէջ թերեւս ապագայ տաղանդներ զտնուին օրին մէկը լեցնելու սահմանուած այն խումբաները որոնք հետզհետէ բացուեցան մեր բեմին վրայ՝ արուեստագէտներու մահերով : Շատ շիտանել պիտի ըլլայ այդ սկսնակները, ըսել անոնց թէ Ադամեան մը կամ Դրեանց մը պիտի դառնաք . բայց միեւնոյն ատեն համակրական անցողակի յիշատակութիւն մը իրենց եւ իրենց առաջնորդողին համար՝ յրազրութեան դերէն շեղում մը չէ : Ասիթր պիտի գայ անշուշտ որ երթանք տեսնենք զիրենք բեմի վրայ , որչափ ալ անշուք ըլլայ այդ բեմը , ու գաղափար մը կազմենք . անտարբեր ընթացքով մը պիտի վհատեցնէր զիրենք . հետաքրքրութիւնն ու քննադատութիւնը պիտի սրտապնդեն :

Յետոյ , կամքի ոյժի գեղեցիկ օրինակ մը երեւան կուգայ այս արուեստասիրական ձեռնարկութեան մէջ . նախ Մնակեանին կողմէ , որ տակաւ տակաւ իր քովէն հեռացումը տեսնելով իր բեմական ընկերներէն շատերուն , հին նաւապետի մը անայլայլութեամբ կը նորոգէ իր քայքայուած նաւը ու նոր նաւապետեր պատրաստելու համբերատար աշխատութեանն չի խորշիր . երկրորդ , դերասա-


նական թեկնածուներուն կողմէ , որոնք ապարդիւն յուսախաբութիւններուն գիտակից իրենց երիտաւարդութիւնը , կորովը , ապագայի մը պատրաստուելու երազները կը նրբիւրեն թաղարնի : Անշուշտ , իրենց վարպետը չպիտի մոռնայ , իր զաւաթսութեանց շարքին մէջ , քիչ մըն ալ խօսիլ անոնց՝ դերասանութիւնը արուեստի տեսակէտով բմբռնելու եւ կատարելու պէտքին վրայ , եթէ կուզեն անուն մը չինել իրենց . յիշեցնել անոնց թէ ուսումնասիրող ու խղճամիտ դերասաններն են միայն որոնք՝ բնական յարմարութեան մը առաւելութիւնն ալ միացնելով իրենց անձին վրայ՝ համբաւ մը ունեցան մեր բեմական համեստ շրջանակին մէջ :

Պատկառնորի մը վկայականը չէ որ պիտի տրուի այդ երիտաւարներուն ձեռքը , ո՛չ ալ նիւթական բարեկէցութեան մը խոտտումը պիտի չլայլուի անոնց . ատենց բաթմոյի ձմեռներն ու պանիր-հացով օրեր անցընելու տխուր պատահականութիւնը մինչեւ իսկ կրնայ ներկայանալ , եւ սակայն բեմը կը ժպտի իրենց : Այսքանը բաւական ելեր է որ ընդգրկեն ասպարէզ մը որ ամէն բանէ առաջ զոհողութեան , հալումաշի ասպարէզ մըն է . աւելին բսելը յուսահատեցնել պիտի ըլլար վառնք . բայց գէթ այսքանին գիտակցութիւնը ունենալով առաջ անցնելին՝ իրենց առաջին արժանիքը կրնանք նկատել : Նրանի՛ թէ յաջողին :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Պարոնեանի գործերուն ուսումնասիրութիւնը ընելու ձեռնարկած է Բաղուայի համալսարանէն ուսանող մը , Պ. Պատմաձեան , Բաղուայեցի մէջ՝ որուն մայիսի պրակը կը պարունակէր արդէն առաջին մասը այդ երկասիրութեան՝ ողբացեալ երգիծարանին պատկերովը մէկտեղ : Վենետիկի «Հանդիսարան»ը անշուշտ առանձին հատորի պիտի վերածէ ետքէն այդ պարբերական հրատարակութիւնը : Մեր գրական աշխարհին համար ուրախայի երեւոյթ մըն է որ Պարոնեան՝ իր մահէն բաւական տարի ետքը՝ մէկէն աւելի կենտապրիւններ կ'ունենայ , — վառնք զի՛ որչափ որ գիտենք՝ Հրանտ Ասատուր ալ վաղուց ձեռնարկած է Ազգ. Զոքերու հեղինակին գրած քննարկն ուսումնասիրութիւնը պատրաստելու կենտապրական ընդարձակ ծանօթութիւններով , որոնք կը խոստանան ամէնէն կատարեալ ու խղճամիտ պատ-

կերացումը ըլլալ Պարոնեանի կեանքին ու գրած քննարկն : Փափագելի էր որ մեր գրագէտ բարեկամը աւարտելով այս շահեկան երկասիրութիւնը , ինքն ալ տաղաբութեան յանձնէր : Եթէ Պարոնեան իր տեղը բռնող մը չունեցաւ հայ յրազրութեան մէջ , գոնէ իր գործերուն ուսումնասիրութեան ընթերցումը պիտի կրնայ գաղափարը ու ճաշակը տալ նոր սերունդին թէ ինչ էր անոր գրչին յատուկ սրամիտ ու նուրբ երգիծանքը . եւ յետոյ , պիտի յիշեցնէ , — տխուր վերջաւում մը իրական կեանքի . — թէ տաղանդաւոր հրապարակագիրը ինչ դասն օրեր ունեցաւ իր գրչի գործունէութեան մէջ , ամէնէն հաւանաբար ու զնահատուած թուականներուն իսկ նիւթով սակայն արժանապատուութեան զգացում մը որ չտկարացաւ երբեք :



Հովը ամենի՝ կէս գիշերին մօտ
Հարաւեն յանկարծ մռնէր ցասկոտ
Ձաղկելով բմբոստ ալիքներ ծովուն.
Աստուած ողորմի՛ ճամբորդին նաւուն:

Տիրամօր ժպտուն պատկերին դիմաց
Մայր մը աղօթքներ փափաք կամաց.
Կանքեղն արծաթէ, մօմիկ մ'առնթեր
Սփռին բեկ բեկ անուշիկ շողեր.
Մատուռիկ մ'էր այն չքնաղ խաղաղիկ
Ուր գուգակցէին մետաքս և ծաղիկ.
Խեղճ կինը հոգւոյն աչքերէն խեղդուկ
Հառաջ հանելով կ'արտասուէր գաղտուկ.
Իր հաւատքն էր խոր՝ վշտին հաւասար,
Կ'ուխտէր՝ հեծեծէր, սակայն կը յուսար:

Իսկ իր ամուսին գլխահակ արտում
Հազիւ զսպելով սրտին վրդովում,
Ցաւէն բնկճուած՝ հոգեկան տարբեր
Զգացումներով ան այ տառապէր:
Դուրսը՝ սուր կանչով հովը կողկողէր
Ու ծովը ծեծէր այն նաւուն կողեր
Ուր բերէր իրենց սիրական գաւակ,
Պատկերին առջև մայրը շարունակ
Աղօթէր՝ արցունք քափելով աղի
Ուր հովը դադրի, ծովը խաղաղի:

Այրը՝ սեզ տիպար զարգացած մտքի,
Վիշտն ունէր միայն՝ առանց հաւատքի.
Ի գուր աղօթել փորձած էր շատ հեղ,
Հովուն ունկնդրէր տենդոտ՝ խելայեղ.
Ու նախանձելով հիանար հիմալ
Իր կնոջ անկեղծ հաւատքին վրայ:
Երբ առտու եղաւ, յոգնած նուաղուն
Մայրը մըրափէր ու դէմքն էր ժպտուն.
Աղօթքն էր փրկած նաւը ճամբորդին
Ու երազին մէջ համբուրէր որդին:

Արծաթ կանքեղին իւզն սպառած էր,
Ու մարելու մօտ՝ ճարճատուն կայծեր
Արձակէր փուշ փուշ. հայրը որ յամառ.
Ու չոր աչքերով հսկէր ուժասպառ,
Կանքեղին մօտիկ եկաւ ու՝ հրպարա
Ճակատը ծրած իրրւ յանցապարտ,
Հապճեպով լեցուց ձեթի կաթիլներ,
Համբուրեց գաղտուկ Տիրամօր՝ պատկեր,
Յետոյ մրափեց: Բայց իր դալկահար
Շրթբունքին վրայ ժպիտ մըլջուար:

Հովը ամենի՝ առաւօտեան մօտ
Յանկարծ մեղմանար, կարծես ամաչկոտ
Փայփայէր կապոյտ ալեակներ ծովուն.
Աստուած կ'ողորմէր նմոյսին նաւուն

ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

ՇՐՋԱՆԱԻԱՐՏ ԱՂՋԻԿՆԵՐԸ

(ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒԱԾ)

— Ի՞նչ կ'ընեն մեր շրջանաւարտները :

Այդ ալ հարցնելու բա՞ն էր : Ի՞նչ պիտի ընէին . եթէ մանչ են՝ գործի մտնել եւ ստակ չահելու կ'աշխատին . իսկ եթէ աղջիկ՝ ամուսնանալ կը ջանան :

Պատասխանի սովորական կազմադարձ է ասիկա : Ըսել չէ սակայն , թէ ամէնէն յստակ եւ գիւրահասկնալի պատասխանն ըլլայ : Ուրովհետեւ , փախածքին ու նպատակին մէջտեղը գործածուելիք միջոցը կայ , որուն վրայ բան մը չըսեր բնաւ : Միջոցին ընտրութիւնն է որ ամէնէն աւելի ցոյց կու տայ զանազանութիւն գաղափարի , զգացման կամ դատարարական թեան :

Ստուգիւ , ի՞նչպէս երկտասարդ մը գործ կը գտնէ , ի՞նչպէս կը յառաջանայ եւ ի՞նչպէս կը հարստանայ :

Ի՞նչ կերպով ամուսին կը գտնէ աղջիկ մը , ի՞նչպէս կարծեցնէ իր գեղեցկութիւնը , կարողութիւնը կամ յատկութիւնները :

Ընդհանուր եւ առաջին գաղափարը որ անմիջապէս մտքերնուս կը ներկայանայ , մանչերուն համար՝ սեղանաւորի մը կամ վաճառականի մը պաշտպանութիւնն է (ուսեցողին) . իսկ աղջկանց՝ համար՝ դրամաժիտը (դարձեալ ուսեցողին) :

Ամենադիւրին միջոցն է՝ այս՝ որ ոչ ձիգ կ'ենթադրէ՝ ոչ զրկանք . ո՛չ զտնտեսութիւն , Բաղդին մէկ օժանդակութիւնը , որուն վրայ չարժեք երկարել :

Աւելի հրահանգիչ է , անշուշտ , նկատուելթեան տանել մնացեալ միջոցները , որոնց մով խրաքանչիւր անհատ ի գործ կը զնէ իր մտային ու մարմնական ամէն ձիրքերը , կարողութիւնները եւ կը նետուի ասպարէզ :

Առ այժմ՝ մանչերը թողունք . նուազ չա-

հեկան չեն , բայց ամէնէն համակրելիներն ալ չեն : Ո՞վ կը զրադի մանչերով . անոնք զլուսինն քարէ քար կը վարնեն եւ մէջէն կ'ելլեն : Անոնց այն ատեն խօսքը կ'ըլլայ՝ երբ քոսկին կը հնչէ : Այն օրը միայն արժէքնին կը գնահատուի :

Մարդկութեան երկրորդ կէտին շատախղներուն նկատմամբ տարրեր վարմունք կայ : Համակրութիւն , սէր եւ մտածութիւն՝ ամէն ասիկա այս կէտին կը վերապահուին : Կարելի էր տարրեր կերպով ընել : Չգիտեմ , գէթ նկատելով այն ջերմ փափաքը զոր կ'իները ունին՝ աշադրութեան յարատեւ աւարկայ ըլլալու :

Խնդրին վիճարանութեանը համար՝ մայրերուն միջամտութիւնը անհրաժեշտ է : Մայրն է որ իր աղջկանը առաջին քայլերը կ'ուղղէ . մայրը կը տղաւորէ նախնական դաստիարակութիւնը , վերջապէս՝ մերը բերնով , սովորաբար , կը հրապարակուին աղջկան մը բաւականութիւնները եւ յատկութիւնները :

Չենք չափազանցեր , ուրեմն , ըսելով . «Ինչպէս մայրը , այնպէս աղջիկը» :

«Աղջիկ մը ունիմ , Պարոն , որուն համար կ'ըսեն թէ գեղեցիկ է . երեսունին կը մօտենայ : Եթէ չի կրցայ ամուսնացնել , պատճառը այն է որ դրամաժիտ չունիմ իրեն տալու , կամ լաւ եւս փեսացուիս տալու : Բայց եւ այնպէս՝ տանտիկնոջ առաջնակարգ յատկութիւնները ունի : Առուտուր ընել եւ կերակուր եւ փել , հետեւաբար աղախինի հրամայել գիտէ : Ծաշակով կը հապուի . եթէ ժամանակ ունենար՝ ինքնին կրնար ձեւել ու կարել :

«Այս յատկութիւնները բաւական են , կարծեմ , սքանչելի կ'ին մը ընելու գինքը :

«Բայց ամէնը այդչափ չէ . փաւեակի վրայ քիչ շատ կը նկարէ . մեր թէյի գաւաթները եւ պտուղի սկաւառակները ինքը նկարեց :

«Գեղեցիկ ձայն մըն ալ ունի եւ լաւ դաշնակ կը զարնէ :

«Կ'ապահովեմ գծեղ , Պարոն , թէ մարդ շատ կանուխ ելելու է առտուն՝ աղջկանս անցուցած օրուան պէս ամբողջ օր մը զբաղելու համար :

Այս յայտարարութիւնը առաջ բերելու քիչ մը կը կարմրիմ , ամօթէս անշուշտ :

Պատճառը յայտնի է . մեր հայ ընտանիքներու մէջ չկայ մայր մը որ այս լեզուն կարենայ գործածել իր աղջկանը նկատմամբ . ոչ խի աղջիկ մը ինքզինքին համար . ու հետեւորար արդարացիէ սոսկալիս այլազան գործունէութիւն մը :

Իրենց գործունէութեան տեսակէտով , մեր շրջանաւարտ հայ աղջիկները հետեւեալ կերպով կրնան դասակարգուիլ :

Ա. — Անոնք որ մրցանակարաշխութեան յաջորդ օրը խոհանոց կ'իջնեն , պնակ կը լուան , կը չփեն , կը չարեն , կաւեն . իրիկուան դէմ ալ կը հագուին ու պատուհանը կը նստին : Այս աշխատութիւնները այնքան սովորական են որ արժէքէ զուրկ կը նկատուին : Առաջին եկող զիւղացի աղջիկը երկու օրուան մէջ կը սորվի , ամիսը 60 դահեկանի : Հետեւորար յիսթականին պակասութեամբ չէ որ շատ աղջիկներ կը ստանձնեն այս ապերախ աշխատութիւնները , այլ սոսկ դաստիարակութեամբ , ճաշակով , dilettantismeով : Ապաստէի մը , ասոնց համար , տան տիկնոջ կամ աղջկան շափ մաքրակեր չէ : Ըստ իմ բուն պատճառը այն է որ տղնուագոյն աշխատութեամբ մը պարապելու ճաշակը չունին եւ իրենց անգին ժամերը կը վատեն ամիսը 60 դահեկանի համարժէք՝ ստորին աշխատութեանց :

Բ. — Անոնք որ սպասուոր ունին՝ բայց տան հսկողութեամբ , ծախքով , կարգադրութեամբ զբաղելու ճաշակը ստացած չեն : Վարպետը խոհանոցին եւ առուտորին կը հսկէ : Պօթիկներ կը կարգադրէ ննջասենեակ , ճերմակեղէն , սրահ : Պօթէրը կը հայթայթէ

հանդերձեղէն : Պարոնն ալ կը վճարէ , եթէ կանխիր կը բաւէ : հակառակ պարագային , որ սովորականն է , պարտք կ'ընէ :

Օրիորդը հիւր կ'ընդունի . շրջագայութենէ շատ չարտօր . ընթերցասիրութիւնը օր օրի կը պակսեցնէ . դաշնակի վրայ Grand caprice hongrois կը զարնէ , ուժգին . կ'երգէ Stella Confidente , ինքզինքը նշանաւոր ընելու առիթներուն մէջ :

Գ. — Անոնք որ կը խորշին ու եւէ գործունէութենէ , մտքի կամ մարմնոյ : Ծարպ կը զիւղեն ապագային համար կամ ջղային թեթեւ անհանգստութիւններ կը մշակեն . կը մտածեն թէ ճարպ կամ ջիղ մասնաւոր հրապոյրէ զերծ ըլլալու չէ :

Դ. — Չերկարելու համար , չորրորդ դասակարգ մըն ալ սահմանեմ՝ որ կը մտնեն մտքի եւ մարմնոյ միջեւ յարաբերական գործունէութեան նշաններ ցուցնողները :

Ասոնք կ'ըմբռնեն թէ գիտութիւն , տան մատակարարութիւն , ընդհանուր պէտքերու գոհացում , պարտ ու պատշաճ հանդերձեղէն , վերջապէս խելացի խնայասիրութիւն անհրաժեշտ պայմաններ են կեանքի՝ այնքան պատուարեր որքան զիտական հմտութիւն մը , կամ Գրանտերէն հատոր մը հայերէնի թարգմանելու կարողութիւնը :

Այս դասակարգիւնները լաւ զանազանելու համար , statitiennեներու դաս կ'անուանեմ : Անոնք գիտեն թէ ամիսը քանի՝ քաշ միս ծախսելու է եւ քանի՝ քաշ կը ծախսուի : Նպարաւաճառին հաշիւը քիչ անգամ զեղծման տեղի կրնայ տալ : Սահարարը 150 հաւկիթի հաշիւ չի կրնար հանել ամսագլխուն՝ եթէ երկու անգամ միայն քանեսեքսանիս չինած է . որովհետեւ օրիորդին փորձառական վիճակագրութիւնը 50 հատը բաւական նկատել կու տայ : Վերջապէս՝ կը պատահի նաեւ որ օրիորդը ծախքի կանոնաւոր տոմարակալութիւնն ալ ունենայ :

Տան ընդհանուր հսկողութիւնը քննադատութեան տեղի չի տար՝ մաքրութեան , խնամքի եւ կարգապահութեան տեսակէտով :

Այս դասակարգին աղջիկները փափաքուածին չափ բաղմամբ եւ սովորական չեն մեր մէջ , ինչ որ պակաս մըն է . որովհետեւ

իրենց վերագրուած այս զանազան յատկութիւնները շատ արհամարհելի չեն :

Մտային մշակութեան տեսակէտով routinière են եւ կատարելագործութեան կամ նշանակելի զարգացման ոչ այնքան տրամադիր :

Վերոյիշեալ դասակարգութենէն դուրս կը թողում բացարձակ մասնագէտները արդու-զարդի, պճնասիրութեան, սնտոյի համբաւի եւ ունայնամտութեան : Ասոնք այն կարգի risqueներ են որոնց ապահովագրական primeք բարձր կ'ըլլայ :

Մեր ընկերական միջավայրին մէջ կը փայլին երբեմն, հազուադէպ կերպով, աւելի լուրջ մասնագէտ աղջիկներ. ինչպէս դաշնակի, երգի, նկարչութեան, ուսուցչութեան, ասեղնագործութեան, դերձակութեան եւ ուրիշ ասոնց նման արուեստներու :

Դիտուած է թէ շատերը պէտք եղածին չափ չեն արժանացած իրենց մասնագէտի համբաւին : Օրինակ առնենք դաշնակը : Նախ՝ դաշնակի մէջ զգալի յառաջդիմութեան հասնողները ընդհանրապէս ինքզինքնին անտարբերութեան մը կուտան կեանքի մնացեալ պարտականութեանց նկատմամբ, ինչ որ աններելի է : Յետոյ՝ իրենց յառաջդիմութեան աստիճանը նոյնքան նշանակելի չէ . սակաւ-թիւ իսկ չեն անոնք որ բուն արուեստի կիրքով եւ կատարելագործութեան տենջանքով կ'աշխատին : Կէս տաղանդներ շատ ունինք, կամ լաւ եւս սովորական amateurներ, որոնք տանտիկնութեան եւ արուեստաւորի առպարէզներուն կէս ճամբան կը մնան . այսինքն ոչ կատարեալ երաժիշտներ կ'ըլլան եւ ոչ ալ կատարեալ վարիչներ կեանքի :

Այս դիտողութիւնները անշուշտ չեն վերաբերիր այն անհատներուն որոնք արհեստի մը մէջ նետուած՝ ապրուստնին կը ճարեն ինչպէս որ կրնան :

Սոյն ընդհանուր դասակարգութիւնը ճշմարտանման կրնայ ըլլալ, բայց վերջնական չէ եւ կը ներկայացնէ՛մ զայն իր պարզ փորձ մը՝ առանց որ եւ է յաւակնութեան :

Ինչպէս ամէն ձեռնարկութիւն՝ ամուսնութիւնն ալ ունի իր ելմտական կողմը : Մեծատուններու համար այս ելմտական տեսակէտը դրամոփառ բառով կ'ըմբռնուի :

Ամուսնութիւնը, յետոյ՝ ընկերակցութիւն մըն է, դարձեալ ձեռնարկութեան տեսակէտով, ուր իւրաքանչիւր անդամ պարտի բաժին մը (apport) բերել, ընկերական դրամագլուխը կազմելու համար :

Նիւթական կամ բարոյական՝ այս բաժինը պարտի ըլլալ իրական, գործնական, գնատելի եւ երբեմն ալ փոխանակելի : Պարտի նաեւ ըլլալ համեմատական՝ նախատեսուած կեանքին պայմաններուն : Այսինքն՝ նախատեսուած կեանքին շահագործութիւնը ինչքանակութեամբ որ միտք, կորով, նախաձեռնութիւն, սպառելի նիւթ կամ ծախք կը պահանջէ, նոյն պահանջման համեմատական պէտք է ըլլայ իւրաքանչիւրի բաժնին արժէքը կամ քանակութիւնը :

Վախնամ որ երկրաչափական առաջարկութեան մը կերպարանքը առաւ այս բացատրութիւնը : Ուստի պարզեմ :

Ենթադրեցէք պահ մը ամուսնանալու տրամադիր երիտասարդ մը որ՝ ներկայ ցուցակը ձեռքը, կը հաշուէ թէ ո՞ր դասակարգին վրայ կրնայ ընել իր ընտրութիւնը :

Առաջին դասակարգին բերելիք բարոյական բաժինն է սովորական կարողութիւն մը, ինչպէս՝ աման լուալու, տախտակ սրբելու եւ տունը ձիւնի պէս փայլեցնելու : Բարոյական ըսի այս բաժինին, որովհետեւ նիւթական արժէքը այնքան անշան է որ չարժեք : Ենթադրեցէք թէ, պարագային համեմատ, դրամական կարելոր բաժին մըն ալ աւելնայ : Արդ, երիտասարդ մը որ կը բերէ արուեստը, գործունէութիւնը կամ . . . պարագորդութիւնը, յարմարութեան խնդիրը միայն կը քննէ եւ մնացածը կը թողու ճաշակին :

Երկրորդ դասակարգին պատկանող աղջկան մը բերելիք բաժինը դրական կամ գնահատելի արժէք մը ունենալէ շատ հեռու է : Դրամոփառ կարենայ տալ թէ ո՛չ, անհատական աննշան գործունէութեամբ չէ կարող նպաստել ամուսնական ընկերութեան վարչացման կամ նոյն աստիճանի վրայ պահպանման : Բարոյական արժէքը կրնայ ըլլալ զիրք մը, յարաբերութիւններ, առերեւոյթ դիւրակեցութիւն մը, որքան ատեն որ ամուսինը խօսք կը հասկըցնէ պահանջատէրներուն :

Մնացածը երկուստարդին համար հաշուոյ եւ յարմարութեան խնդիր է, եթէ իր բերելիք անձնական բաժինն ալ, իբր մտային մշակութիւն եւ նիւթական միջոց, սահմանափակ է:

Ճարպիկ մշակութիւնը եւ ջղայնութիւնը զրական ու գնահատելի գործակցութիւններ չեն: Կեանքի նեղ պարագաներուն մէջ ճարպը կը հալի եւ ջիւղը կը փրփրի:

Եթէ բացարձակ մասնագէտ կամ արուեստաւոր օրիորդները մէկդի թողունք, ա. մէնչն արժեքնական յատկութիւններով օժտուած տարրը չորրորդ դասակարգին մէջ կրնայ գլուխուիլ, այսինքն *statistienne*ներուն մէջ:

Ասոնց բերելիք բաժինն է յարաբերաբար խնամուած դաստիարակութիւն մը որ նպատակ ունեցած է զարգացնել պատասխանատուութեան, հսկողութեան, հաշուի եւ նիւթական գործունէութեան թագուն տրամադրութիւնները եւ զանոնք վերածել զրական եւ գնահատելի զրամագլուխի մը, պարագային համեմատ նիւթական եւ բարոյական:

Քիչ ընդհանրացած է, ինչպէս րսինք, այս դաստիարակութիւնը եւ զրամով չի գընուիր: Յարատեւութեան եւ հաստատամտութեան արդիւնք է: Ապրուստը քիչ շատ ա. պահոված երկուստարդ մը աղէկ գործ մը քրած կ'ըլլայ այս կարգի յատկութիւնները իբր բաժին ընդունելով զրամագլուխին, զրամածիտ գտնուի թէ ոչ:

Փաղով բացարձակ մասնագէտ օրիորդներուն՝ իրենց արուեստի բաժինը կրնայ վերաբերիլ հաճոյքի, ինչպէս՝ երաժշտութիւն, նկարչութիւն, զրագլխութիւն, երբեմն ալ ասեւտուր, ինչպէս՝ ծաղկեղինութիւն, զերծակութիւն, գլխակաղործութիւն, եւայլն:

Եւմոական տեսակէտով՝ հաճոյքի արուեստները պերճութեան կարգը կ'անցնին՝ եթէ այդ արուեստները այնքան զարգացած չեն որ, ձախորդութեան պարագային, նիւթական գնահատելի եւ փոխանակելի արժէք մը ունենան: Պահպանուելու եւ զարգանալու համար իսկ՝ զրամածիտի միջամտութեանը կը կարօտին: Ինչպէս միւսները, այս պարագան

ալ ճաշակի, հաշուոյ եւ յարմարութեան խընդիր է:

Այս զանազան խորհրդածութիւններով եզրակացութեան մը յանգելու համար խօսքս հայ ընտանեաց մայրերուն կ'ողգեմ եւ կը հարցնեմ. — «Աղջիկդ, Տիկին, զոր դպրոց զրկեցիր ուսուցանելու համար, այսօր կը ներկայանայ քեզի վկայագիրը ձեռքը չըջանաւարտ մը, որուն դաստիարակութեան պատասխանատուութիւնը քեզի կ'իյնայ:

«Այդ վկայագիրը ստանալու համար՝ աղջիկդ դպրատան ամէն կարգերէն անցաւ, ստորինէն մինչեւ բարձրագոյնը: Ինչպէս անոր կարգ պիտի փոխել տաս դուն, ընկերութեան մէջ, Ո՞ր տեսակ գործունէութեամբ պիտի ամուլջացնես անոր դաստիարակութիւնը, պիտի զօրացնես սիրտը եւ պիտի զարդարես միտքը սրպէս զի առանց սպասելու բազդին կոյր զիցունհին կամ դրամին, որ սպասածիդ չափ կ'ուշանայ, աղջիկդ կարենայ ներկայանալ ամուսնական ընկերակցութեանց հրապարակը, օժտուած դրական եւ գնահատելի յատկութիւններով, պատրաստ ամէն պատասխանատուութիւն ստանձնելու մտքի կատարեալ գիտակցութեամբ, վերջապէս՝ մէկ դասէն միւս դասը անցնելու կարողութեամբ:»

Աղջիկ մը պիտի կարենար այս ուղղութեամբ, եթէ չեմ սխալիր, տիրանալ զրամագլուխի այն արժանաւոր բաժինին զոր պարտի ձեռքովը բերել ամուսնութեան պայմանագրութեան ստորագրուած օրը: Դրամածիտը կամ հարստութիւնը ինքնին կրնայ գալ հետապնդումէն կը խորշի:

Եթէ մեր հայ ընտանիքի մայրերը, իրենց մեծ ամասնութեամբը, դեռ չեն խորհած այս պարագաներուն եւ եթէ կատարեալ գաղափար չեն կազմած այս կարգի յառաջադէմ դաստիարակութեան մը արդիւնաւորութեանը վրայ, թող ներեն ինձ, մինչեւ այն ատեն, հարցնել իրենց դեռ այսօր.

— Ի՞նչ կ'ընեն չըջանաւարտ աղջիկներնիդ:

Բերա

ԱՄՄԻՆԷ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Դպրոցական առողջապահութեան յոռի թերութիւններովն է որ դպրոցի մէջ կը տեսնուի նաեւ ողնայարի ծուռութիւն բուժած հիւանդութիւնը, որուն պատճառն են դարձեալ, անյարմար եւ անկանոն նստարաններն ու գրասեղանները : Փահրներ, կիլեօմ, վիրսով առողջարան բժշկիները իրենց երկար քննութիւններով դիտած են, որ գրեթէ երեսուն տա հարիւր աշակերտները դպրոցի մէջ են թակայ կ'ըլլան ողնայարի ծուռութիւններու : չեմ կարծեր որ մեր աշակերտները ազատ ըլլան այս դժբաղդութենէն, քանի որ իրենց նահապետական հիւօրէնք նստարաններուն եւ գրասեղաններուն վրայ, միշտ ծուռ դիրքով նստած, կը դրեն ու կը կարդան : ողնայարի սիւնակը ճկուն, կախուղ ու դիւրաթեք մանաւանդ երախաներու քով, կը նմանի ծառի մը բունին, վարդի մը ցօլունին : եթէ ուղիղ պահուի, ուղիղ ալ կը մեծնայ, ապա թէ ոչ կը ծոխ, մէկ կամ միւս կողմին կը հակի եւ կը մեծնայ ծուռ : գիտէ՞ք թէ ողնայարի ծուռութիւնները ի՞նչ գէշ հետեւութիւններ կ'ունենան մանուկներու վրայ : ողնայարը ծռելով, հետը կը ծռէ ողնածուծը, իր անթիւ անհամար ջլակծիկներով : կը ծոխն կողբերը, կը տճեւնայ լանջային վանդակը, ուսերը իրենց հորիզոնական միաձեւութենէն կը չեղին, անբալները գէպի դուրս եւ վեր կը ցցուին, եւ դժուար չէ կարծեմ երեւակայել թէ՛ այս վիճակին մէջ կը վնասուին բազմաթիւ շիղեր, կը վնասուին թոքերը, սիրտը, որոնց արդիւնքը կրկան դժբաղդարար, սրտի հիւանդութիւններ, թոքերու փափկութիւն եւ անարիւնութիւն, ողնայարի ճնշում եւ այլեւայլ ջլաթուրութիւններ, ոսկրափուտ արտեր, ինչպէս նաեւ ալլըրերու անբնական

տճեւութիւններ, կոնքի անդարմանելի կոտորութիւններ, որոնք ապագային մեծամեծ փորձանքներ կրնան բերել աղջիկներու զըլլուն, երբ տանց հարսնութեան եւ մայրութեան ժամը հնչէ :

Վարժարաններու մէջ յաճախողէպ հիւանդութիւններէն են հազը, հարրուխը, եւ պատճառ ունին՝ վարժարանի օդին ապուկանութիւնը, փոշելից մթնալորոքը, շարունակական օդահոսանքները, անկանոն եւ յոգնեցուցիչ դրօսանքները եւ անզգուշութիւնները ցրտառութեան դէմ : Մեր վարժարաններուն մէջ պակաս չեն բնա՛ւ հարրուխը եւ հազը, որոնք առ երես թէ եւ չա՛տ ոչինչ բաներ կերեւան, բայց կրնան մեծ հիւանդութիւններու դուռ բանալ : զանոնք անհետ ընելու համար, նախ՝ պէտք է որ աշակերտներուն ու աշակերտուհիներուն սորվեցնենք պատասխարուիլ ցուրտի դէմ, յետոյ վարժարանին օդահոսանքները խափանենք, գրօսանքները կանոնաւորենք առողջապահական պատուէրներու համաձայն : մաքրենք վարժարանին փոշին որ թշնամի է հազին, եւ որ՝ աշակերտներուն քիթին մէջ լեցուելով ո՛չ միայն անոնց ազատ շնչառութիւնը կարգիլէ, այլ եւ կրնայ անոնց մարմինին մէջ տարածել տեսակ տեսակ միքրոպներ : պէտք է որ աշակերտներուն շարունակ թարմ օդ չնշել տանք : յիշելով ժան ժաք Ռուսոյի այն նշանաւոր խօսքը, որ կըսէ թէ մարդու շունչը մարդու թոյնն է : երբոր մարդս շարունակ սենեակի մը մէջ փակուի մնայ, առանց անոր պատուհանները բանալու, գիտէ՞ք որ հետզհետէ զայն կը լցնէ իր թոքերէն դուրս վտարած ածխային թթուով, որուն ի՞նչ ատրճան մահացու թոյն մը ըլլալը յայտնի է արդէն :

Սոյն այս պատճառներովն է դարձեալ որ վարժարանի աշակերտներ չարունակ ենթակայ կըլլան կոկորդի, կոզկոզիթի, ականջի, թքագեղձերու, խոչակի այլեւայլ հիւանդութիւններու, որոնց վրայ ծանրանալ աւելորդ կը համարիմ:

Դպրոցի հիւանդութիւններու կարգը դառած են բժիշկներ, ժանտառենդը, որուն պատճառը թէեւ ոմանք զրատութիւնն ու ստամոքսի խանգարումները կը համարին, բայց՝ այսօր հաստատուած է, որ խմած ջուրն է անոր գլխաւոր պատճառը. խմած ջուրը, այս՝ եթէ բլայ այն ազտոտ եւ եթէ ունենայ մօտիկութիւն կոյւլիներու, որոնցմէ քաղելով էպէրգեան կոչուած միքրոպները, կապականի եւ կըլլայ վնասաբեր: Այսպիսի ջուր մը երբ մարտողական գործարանին մէջ մտնէ, հոն տեսակ տեսակ խանգարումներ յառաջ կը բերէ, բնութեան կանոնաւոր գործառնութիւնները վերի վայր կը շրջէ, եւ ազատ գործունէութեան դաշտ մը կը պատրաստէ իր պարունակած միքրոպներուն, որոնք՝ այն տոնէն սկսեալ այլեւայլ թոյներ կարտագրեն կը լեցունեն արեան շրջագայութեան մէջ տակաւ երեւան հանելով այն անտանելի հիւանդութիւնը՝ զոր կանուանենք թիֆ: Տեսնուած է որ ամբողջ թաղ մը, ամբողջ վարժարան մը ազտոտ ջուրի միջոցաւ վարակուած է ժանտառենդէ. աշաւորք կերպով նայելու ենք միշտ, որ մեր դպրոցներուն մէջ խրմուած ջուրը բլայ բժկապէս մտքուր:

Դպրոցական կեանքի մէջ աշակերտները կուենան նաեւ անարիւնութիւն (anémie). անարիւնութիւնն է՝ արեան տկարանալը, ջուր կտրիլը, որուն մէջ արեան սպիտակ գնդակիկները կը շատնան, կարմիր գնդակիկներն ալ կը քիչնան գոնաառեւելով եւ տոգունելով, ասոր պատճառն է անոնց ուժ, ոգեւորութիւն եւ գոյն տուող hémoglobuline քսուոր քսուած նիւթին նուազիլը: Արեան գնդակիկներու բոսորը շատ պատճառներով կրնայ նուազիլ, անբաւական սննդաւորութիւնը, նստողական կեանքը, արեւէ զուրկ ապականեալ օդի մէջ ապրիլը, մտային չափազանց յոգնութիւնները, ստամոքսի յաճախակի խանգարումները եւ արիւ-

նահոտութիւնները, վատապէս կ'ազդեն hémoglobulineին եւ կը տկարացունեն արիւնը: Արեան տկարութեան հետեւանքն է, գունատութիւն, անգօրութիւն, անմարտողութիւն, սրտի բարախումներ, գլխու ցաւեր, ջղացաւեր, նիհարութիւն եւ հիւժում, որոնց ենթակայ աշակերտներ եւ աշակերտուհիներ, աւա՛ղ, պակաս չեն յեր վարժարաններուն մէջ: Արեան տկարութիւն յառաջ բերող պատճառները մեր վարժարաններէն հեռացնելու ջանադիր ըլլալու ենք ընելով ինչ որ կարելի է ընել, հսկելով աշակերտներուն մօքքի յոգնութիւններուն, ասած սնունդին վրայ, եւ չի զրկելով զանոնք արեւէ եւ օդէ: Օղը արեան կենդանութիւն, արեւը արեան գնդակիկներուն գոյն կու տայ. այս նպատակաւ է որ եւրոպայի մէջ ո՛չ միայն դպրոցականները, այլ եւ թաքախտաւորները արեւի մէջ շարունակ կ'ապրեցնեն:

* * *

Դպրոցներու մէջ յառաջ եկած այսչափ անատրանական վիճակներ եւ զանազան տկարութիւններ, յայտնի է որ կ'ազդեն խորապէս ջղային դրութեան, անոր կանոնաւոր ու ներդաշնակ գործառնութիւնները կը խանգարեն: որով ահա կը փոխուի տակաւ աշակերտներուն հոգեկան վիճակը, եւ կըլլան դիւրագրգիւ, բարկասիրտ, երկշտ, ծոյլ, յող-զող, գանդաղ, տխուր, մոլի եւ օր մըն ալ կը շինուին ջղային կոչուած գծաղղ արարածները: Ջղային վիճակի արդիւնք է, ջղագարութիւնը (hystérie), ջղահիւժութիւնը (neurasthénie), մարմնաշարժը (chorée), լուսնոտութիւնը (épilepsie), եւայլն որոնք արդի քաղաքակրթեալ աշխարհին մէջ կը խաղան շարունակ շատ տխուր դերեր եւ որոնց շատ ու շատ օրինակները մեր ընտանեկան յարկերու մէջ ալ սկսած են երեւիլ շատոնց, իրենց ծնունդը առնելով դպրոցէն: Մեր աշակերտներուն եւ աշակերտուհիներուն ջղայնութեան պատճառը միայն իրենց դպրոցներու հակառողջապահական կեանքը չէ, այլ եւ դաստիարակներու եւ դաստիարակուհիներու կոչում ու բիրտ վարմունքը, եւ յուզիչ սպառնալիքները որոնցմէ մեծ ուշադրութեամբ հետի պահելու ենք մեր տղաքը, մանաւանդ արքունքի հա-

սած պատանիները եւ աղջիկները , յիշելով թէ կեանքի այդ շրջանը մահկանան հասակի ամենէն վտանգաւոր եւ փափուկ շրջանն է , եւ շատ դիւրութեամբ կրնայ սուկալի հիւանդութիւններու մայր ըլլալ :

Դպրոցի մէջ ծագած հիւանդութիւններու շարքը ձեզի գծած պահուստ , շեմ մտնար անցողակի յիշատակել նաեւ այն տխուր վիճակը , զոր աստերուս աստը կը կոչեն , եւ որուն կենթադրուին միշտ մեր խեղճ դպրոցականները ու խեղճ դպրոցականու հիւները . անոնք շեմ տար այդ աստին որ աւելի դպրոցի մէջ ծնունդ կ'առնէ եւ սոսկալի աւերներ միշտ կընէ , դպրոցի քաղցրարոյր անդամատանին մէջ , անոր հոսեւան ծաղիկները , դեռափթիթ վարդերը , նորոշան շուշանները տարածամբողջելով , քանիներ տեսած ենք եւ քանիներ կը տեսնենք . . . որոնց վրայ հսկելու ենք շատ կանուխէն մեր աշակերտներուն եւ աշակերտահիւներուն շար անակուծիւնները հետամուտ ըլլալու . ենք սպաննելու , թող տած լու չենք որ կարգան անոնք գէշ վիպասանութիւններ , հեռու պահելու ենք զանոնք դատարկ կեանքէ , որ ծնող է մշտութեան , հեռու զանոնք պահելու ենք այն ամէն պատճառներէ , որոնք գրգռիչ են երեւակայութեան եւ ծննդական գործարաններու . այս պահուստ է ահա որ մեծ դեր պիտի կատարէ բժշկական հսկողութիւնը , բարոյական կրթութիւնը եւ ֆիզիքական կրթութիւնը . փարելով փարելու ենք անոնց , որպէս զի մեր երկու սեռի դպրոցականներն ալ փրկուին , չըլլան այն ծերագէտ , կորաքամակ , նիշար , վտիտ , ստուերի պէս շրջող մեռելատիպ կենդանի դիակները , զորս Գերեզմանի երիտասարդացը եւ Աշխանի սերունդը ճարտարօրէն ներկայացուցած են արդէն , եւ որոնց սպագան ուրիշ բան չէ , բայց հիւժարտաւոր մաշիլ կամ աստածէս մեռիլ :

Դպրոցական հիւանդութիւններու կարգին անյարմար չէ յիշատակել նաեւ կարգ մը վիրաւորութիւններ , որոնք յաճախ կը պատահին դպրոցի մէջ . կամ դատարարական ծեծերէն , կամ անխոհեմ գրասանքներու միջոցին եւ կամ աշակերտներու իրարու հետ կռուելէն . տեսնուած է , այո՛ , որ վարժապետին

փայտին հարուածները աշակերտին դուրսը , երեսը , աչքը վիրաւորած են , տեսնուած է որ կառավարիչ մը բարկաճայթ պոռչտութենաւ պահուստ « Ծօ անգղաւ զեզ . հի'մա ոսկորներդ կը կոտորեն » ըսած ժամանակը , իրա՛ւ իրա՛ւ խեղճ աշակերտին փափուկ ուղքը , ճղճի՛մ թեւը կտորած է . պատահած է՝ որ գրասանքի ժամանակ մանուկներ զիրար հըրմըշակելով ինկած են քարի վրայ , ունեցած են տեսակ տեսակ ոսկրաբեկութիւններ եւ այլեւայլ վէրքեր : Մանկավարժին պարտականութիւնն է նախ ծեծող չըլլալ , յետոյ հսկել աշակերտներուն՝ որ գրասանքի ժամանակ ծեծկըւուք չընեն , քարերու հետ գործ չունենան եւ զմեկի ըսուած բանը բնա՛ւ եւ բնա՛ւ վարժարանին դուռնէն ներս չմտնեն : Հսկելու է նաեւ որ աշակերտները իրենց երկայն եղունգներով կատուի պէս իրարու երես չի ճանկեն , որով ընկեր ընկերի մարմինին վրայ կրնայ վէրքեր բանալ , եւ եղունգներովը այդ վերքէն ներս պատուաստել տեսակ տեսակ աստարոյժ աղտեղութիւններ :

Դեռ շատ կրնայի երկարել դպրոցի հիւանդութիւններու այս կարեւոր ցուցակը , զոր կը վերջացունեն երկու խօսք ալ ընելով դուրսէն դպրոց բերուած հիւանդութիւններու մասին , որոնք ճանչցուած են փոխադրական կամ փոխանցիկ անունով :

Այս հիւանդութիւններն են թուրք , ոջիլ , կապուսնազը , կեղծմաշիկ , եմֆիլիէնցան , որոնցմէ շատ դիւրին է ազատ պահել վարժարանը , անոնց ենթակայ եղող աշակերտները ներս չառնելով . ինչպէս նաեւ՝ ծաղիկը , ծաղիկիկը կամ սուսմաշիկը , հարսանիքը , կարմրուկը , օձիկը որոնց գէտ կուռելու համար էր որ յանձնարարեցի ձեզ՝ առանց պատուաստի աշակերտ չունենալ , հետամուտ ըլլալ բացակայ աշակերտներուն , եւ անոնցմէ ծաղիկ , հարսանիք , կարմրուկ կամ օձիկ ունեցողները բնա՛ւ չընդունիլ վարժարան , մինչեւ որ իրենց ապաքինութեան օրինական քառուսեքը լրացնեն եւ կատարելապէս մաքրուին այս հիւանդութիւններուն առթած թեւաւորութիւններէն , զի ճիշդ այս միջոցին է որ հիւանդութիւնները փոխադրելի եւ փոխանցիկ ըլլան շնորհիւ այն անհամար միջբոսաններուն՝


որոնք կապրին հիւանդին մարմինէն թափած
թեփերուն մէջ : Հակառակ պարագայի մէջ
եթէ այդ հիւանդութիւններու ճարակումը
արգելել կարելի չըլլայ , այն ատեն միակ զօ-
րաւոր միջոցն է՝ գոցել բոլորովին վարժա-
րանը , զայն օրերով մաքրել ու հակամեխել ,
եւ վերաբանալ միայն այն ատեն , երբ հա-
մաճարակը անհետի դուրսը :

Դպրոցի մը առողջապահութիւնը կատար-
եալ ըլլալու համար , պէտք է որ դպրոցի մէջ
հիւանդութիւններ չըլլան եւ չուենան գո-

յութին այն ամէն պատճառները , որոնք
հիւանդութիւն կը ստեղծեն :

Դպրոցի հիւանդութիւնները արգելելու հա-
մար է . որ առողջապահները խորհուրդ կու-
տան շարունակ զրադիլ նախ աշակերտներու
մարմնային առողջութեամբ եւ ուշադիր ըլլալ
գլխաւորապէս՝ անոնց ֆիզիքական օրինաւոր
կրթութեամբ . մանկավարժութեան եւ դպրո-
ցական առողջապահութեան կենսական մէկ
մասն է ուրեմն ֆիզիքական կրթութիւնը . զոր
նիւթ պիտի ընեմ մեր յառաջիկայ դասին :

ՏՕՔԹ. ՎԱՅՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



(ՍԻՐԵՐԴ)

Տժգոյն ու դիւբիջ , նուրբ ծաղկի մը պէս ,
Երեկ տեսայ գրեզ նորէն .
Ու դուն աչքերովդ ըսիր ուժգնապէս ,
— Քու աւերդ եմ , անօրէն —
Եւ յիշատակը , քաղուած այն օրէն ,
Երբ ան մոռցայ ես գրեզ ,
Արթընցաւ , հրահրեց քու սիրտդ և իմ ,
Ա՛խ կը տանջուիմ . . .

Պըւտի սեր մը եղաւ իմս հիմայ ,
Երազներուս պէս երեք . . .
Յուզուած ծովերուն ցուրերը անկայ ,
Զունին շատ մը եղերքներ :
Սրտիդ աւերման , գոր ես եմ երկներ ,
Գիտցիր խիղճս ե վրկայ .
Երբ օր մը նորէն քեզի հանդիպիմ ,
Պիտի տանջուիմ :

Բայց մի խորհիր քե վատ յանցաւոր մ'եմ ,
Թէ չեմ ներմանդ արժանի .
Դու գիտնս քե ինչ տանջանք մը դժխեմ ,
Գեղեցկութեան ցաւն ունի . . .
Այդ ցաւէն մղուած , անյոյս պարմանի ,
Զքեզ պաշտեր , մոռցեր եմ ,
Աչքերդ քող չըլլան ինձի ռիսերիմ ,
Ներք որ ապրիմ :

ՍՏՓ. ՔԱՐԲՈՒԹԼԵԱՆ

ՍՈՓՈԿԼԵՍԻ ԴԱԳԱՂԸ

Եւրոպական մամուլէն առնելով մեր զուգորներն ալ գրեցին թէ « Աթէնքի մէջ գրաւուեր է դադաղ մը որուն վրայ գրաւած կար Սոփոկլէս անունը , քիչ մը աւելած գիրերով : Դադաղը գտնուեր է Գոլոնոս բլրակին մօտ , Աթէնքի հիսթիա-աքլեմոնիան կողմէն երեք քիլոմետր հեռու եւ փոխադրուեր է Աթէնքի Ազգային Հնութեանց Թանգարանը » :

Այս լուրը հնագիտական մեծ կարեւորութիւն ունի , եթէ արդարեւ գտնուած դադաղը բուն Սոփոկլի կրպականի , այսինքն Սոփոկլ Նշանաւոր թատերագրակին , եւ ոչ թէ Սոփոկլ անուն որ եւ է հասարակ մահա-նացուի մը , զի չի կրնար ըստիլ թէ հին Յունաստանի մէջ Սոփոկլ անունով արիւ մարդ մըն ալ չէր կրնար գտնուիլ : Բայց հա-մարելով որ բուն իսկ մեծահռչակ ողբերգա-կինը ըլլայ այն , կարեւոր կը դատենք հա-մառօտակի : Գծել այս լուրին առաջ բերած այժմէութեան աստիճան թէ ո՛վ էր Սոփոկլ որուն ենթագրեալ դադաղին գրածն իսկ տե-գերական հետաքրքրութեան արժանի գէպը մը կը նկատուի :

Սոփոկլ հին Յունաստանի անմահ փառ-քերէն եւ ամէն դարու մեծ թատերագրակե-րուն մէջ առաջնակարգ գիրք գրաւողներէն մէկն է : Քրիստոսէ առաջ ե . դարու մէջ կ'ապրէր (408-405) : այսինքն նախկին Հել-լենաց ամենափայլուն քաղաքակրթութեան ոսկեդարուն մէջ , որ կը կոչուի սովորաբար Պերիկլեան դար , եւ որմէ ետքը մարդու-թիւնը քանի մը նմանօրինակ դարեր միայն ունեցած է , ինչպէս Օգոստեան դար , Ալեք-սանդրեան դար , Վերածնութեան դար , Լուի ԺԴ-ի դար : Բայց ըստ որում Պերիկլեան դա-րը ամէնէն նախնականն է . հետեւաբար եւ առաջնութեան իրաւունք ունի ոչ միայն ժա-մանակագրական կարգով , այլ եւ իրական արժէքով , վասն զի վերեւ նշանակուած յա-ջորդ ոսկեդարերը ուրիշ բան չէին , բայց թէ

Հելլենական Ոսկեդարուն կրկներեւոյթներ կամ անդրապոլումները , առաւել կամ նուազ նմանութեամբ , եւ աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել , հետեւողութեամբ : Իսկ Պերիկլեան դարու մեծ արժանիքը անոր մէջ չի կայանար որ Մա-րական Նշանաւոր պատերազմները յունական յաղթութիւններով վերջ գտան , այլ անոր համար Հելլենական Ոսկեդար կոչուած է Քրիստոսէ առջի ե դարը , վասն զի առաջ բերած է Եւքլիդեսներ , Սոփոկլներ , Եւրի-պիդէսներ , Հերոֆոտներ , Թուկիդէսներ , եւն . , եւն . :

Արդ ասոնց մէջէն Սոփոկլ միայն , որ այս գրութեան նիւթն է , իր Եւքլիդես եւ Եւրի-պիդէս ժամանակակիցներով կր բաւէ ինքնին դար մը ոսկեդար կոչել տալու : այնքան մեծ համբաւ եւ անուն ունի իրրեւ ողբերգակ թատերագիր : Թէպէտ իր բազմաթիւ երկե-րէն եօթը միայն անկորուստ հասած են մեզ , այն է Անքիլոն , Եղեֆրոս , Հեռակի , Իդի-պոս , Ալաֆա , Փիլոկլես եւ Իդիպոս ի Կոդր-նիս , բայց ասոնց խառքանչիւրը մէյմէկ այն-պիսի հրաշակերտներ են որ շնայելով թէ 25 դարու հնութիւն ունին , սակայն եւ այնպէս իրենց արժէքն բան մը կորուսած չըլլալով են ու կը մնան ցարդ եւ պիտի մնան միշտ հրաշալի գլուխ-գործոյն , ծառայելով իրր նախատիպար ամէն ողբերգակներու , ինչպէս ծառայելին գլխաւորապէս Լուի ԺԴ-ի դարուն թատերագրակներուն , մասնաւորաբար Ռասինի եւ Գորնիլլի : Եւ զարմանալին սա է որ Սո-փոկլ մինչեւ իր խոր ծերութիւնը կը գրէր նոյն յաջողութեամբ եւ կորովով , ինչպէս 35-40 տարեկան եղած ատենը :

Այդ ժամանակները , Աթէնքի մէջ որ աչ-խորհի մտաւորական լուսաւորութեան ան-մրցակից եւ անվիճելի վաստարանն էր , մաս-նաւոր թատրոններ գոյութիւն չունէին հիմա-կուան պէս , ուր վճարեալ մատքով ունին-գիրներ ըսելու երթային , այլ ներկայացու-մ

ներ կը տրուէին, հասարակաց մեծ գումարումներու մէջ ի լուր բոլոր ժողովրդեան, որ նրբացեալ ճաշակ եւ դատելու մեծ կարողութիւն ունենալով կրնար գնահատել իւրաքանչիւրն ըստ իր արժանեաց. ուստի զիւրին գործ չէր բեմի վրայ երեւալ. այսինքն թատերգութիւն մը արտադրել եւ անձամբ ներկայացնել, ըստ որում հիմակուան պէս ուրիշի երկասիրութիւնները ներկայացնելու գերասանական թուականային գրութիւն չկար, այլ հեղինակը ինք պիտի ներկայացնէր իր երկը, եւ Սոփոկլ միշտ ծափահարուեցաւ ուժգնապէս, մինչեւ իսկ իր նախընթացին, Եսքիլոսի, նախանձը չարժեւոր աւտիճան, որ տեսնելով թէ Աթենացիները նախ զինքը մինչ երկինքը կը բարձրացնէին եւ յետոյ սկսան Սոփոկլի աւելի հաւնիլ, սրտին ցաւէն

թողուց Սիկիլիա քաղաքացաւ: Եւ սակայն Եսքիլոս ալ աշխարհի անաջնակարգ ողբերգակներէն է եւ իրմէ քիչ օգտուած չեն Գոսնէյլ եւ Ռատին անգամ, թող սերիչ շատերը:

Բայց աւելի բացորոշ հասկցնելու համար Սոփոկլի արժանիքը, կը բաւէ ըսել թէ ինչ գերադասեմ համբաւ որ ունի Հոմերոս իբրեւ զիւցազներգակ, նոյն աստիճանի տիեզերական համբաւ ունի Սոփոկլ իբրեւ ողբերգակ, ինչպէս եւ իր միւս երկու ժամանակակիցները եւ կրնայ ըսուիլ նաեւ մրցակիցները, այն է Եսքիլոս եւ Եսքիլոսի պէս, որոնք ընդհանրապէս երեքը միասին միեւնոյն գծին վրայ կ'երթան: Ասոնց հրաշակերտ ողբերգութիւնները, ինչպէս բաղմամբիւ լեզուներու, հայերէնի ալ թարգմանուած են:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

1900 Ի ԱՐՈՒԵՍՏԱ ՀԱՆԴԵՍԸ

ԲԱՐԻԶԵԱՆ ՆՕԹԵՐ

Շուէսական ճաղաւարը բացուեցաւ հասարակութեան առջեւ մայիս 8ի (Ն. Տ.) երեքշաբթի օրը: Մոնաքոյի ակնախոյզ պորմին եւ Յունաստանի վարդապետն ու կապոյտ տաղաւարին միջեւ՝ ամբողջովին եղեւին փայտէ՝ չէնք մըն է ասիկա, որուն կատարը կը բարձրանան աշտարակիկներ ու զանգակատուններ, օգային նրբակամութիւնով իւրաքանչէր այցելել, վերնայարկը չուէտական պատուիրակին բնակութեան յատկացուած բլաւով. բայց առաջին յարկի կիսաբոլորակ ու սինազարդ պառչգամը՝ որ Սէն գետին վրայ կը նայի՝ եւ ամողջ գետնայարկը, արամադրելի են: Երբ ներս մտնէք, աջակողմը, Տիօրէնուհին գրասենեակին կից — վասն զի չուէտական տաղաւարին հսկողութիւնը կողմ մը յանձնուած է — պիտի գտնէք ընթերցանու-

թեան սրահը ուր ցուցադրուած է իրենց երկրին տեսարանները ներկայացնող լուսանկարներու հաւաքածոյ մը: Իսկ ձախակողմը տեղեւորական աշխատանոց մը որուն պատերը կը զարդարեն հին պատկերներ, արտասովոր գոյներով: Քիչ մը անդին գորգաշինութեան սեզաններ որոնց առջեւ կիներ կը բանին: Գետնայարկին մէջտեղը, խոշոր աղակերպարանի մը մէջ կը տեսնուին այն ընծաները զորս Օսքար Բ. թագաւորը ընդունեց իր յարեւանին առթիւ. իսկ խորը, չուէտացի համալուար նկարիչ Թիւլէնի երկու պատկերները որոնք մէջ մէկ հրաշակերտ են. ասոնցմէ մէկը կը ներկայացնէ ձմեռ գիշեր մը Լարոնիայի մէջ, բեւեռային գոտիէն հարիւր քիլոմէթր հեռու, գէպի հիւսիս. ձիւնի տեսարան մը, սքանչելապէս յաջողուած, եւ եղջերուներու երամ մը որ կը քնանայ լուսնի լուսով: Միւսը կը

ներկայացնէ Սթոքհոլմի նաւահանգիստը , ա-
մառ գիշեր մը . արուեստագէտը հնարամիտ
միջոցի մը զիմեր է . իր նկարին եւ այն պատ-
ուարին միջեւ , որուն կը կրթնի այցելուն ,
ջուրով լեցուն աւազան մը կոյ որ կէս մու-
թին մէջ , նաւակայքի մը պատրանքը կու-
տայ . ու պատկերին մէջ կը բարձրանան , այդ
ջուրին եզրը , նաւահանգստի տուները այն
կարմրորակ լոյսով պարուրուած որ գիշեր չէ
այլեւս ու գեւ արշալոյսն ալ չէ :

Շուէտական ցուցադրութեան յատկանշա-
նական մէկ մասը կը կազմէ աշոճը Այս բասը
— սրուն համապատասխանող գոյական մը
չկրցին գտնել նոյն իսկ բարիւզեան թերթերը ,
իրենց նկարագրութեանց մէջ — կը նշանակէ
ամբողջութիւնը այն ձեւարուեստներուն զորս
գիւղացիները կը կատարեն ընտանեօք . իրենց
ձմեռնային անվերջ գիշերներուն մէջ . այս
զուտ շուէտական ձեւարուեստի արտադրու-
թիւնները , կերպասեղէններ , խաղալիքներ ,
աւտոնին առարկաներ ու գեղորներ , լեցուցած
են իրենց տաղաւարին տաղակալիկները ու
ծածկած են պատերը՝ գեղարուեստական ճա-
շակով մը :

Բայց ասոնք բոլոր փոքր մէկ մասը կը
կազմեն շուէտական ցուցադրութեանց : Շուէտ
հինգ հարիւրէ աւելի ցուցադրներ ունի ու-
րոնցմէ երկու հարիւր հատը Գեղարուեստից
պալատին մէջ ցուցադրած են . իսկ միւս-
ները՝ զանազան ճիւղերու մէջ ցրուուած , ինչ-
պէս Անտառներու , Մետաղական ու Հանքա-
յին , Մեքենագործութեան , Երկրագործու-
թեան յատուկ բաժիններուն մէջ : Շուէտա-
կան տաղաւարը կը ծառայէ միայն երկրին
յատուկ գրոյմը կրող պատկերացումի մը ,
շուէտական անկիւնի մը՝ կազմութեան ու
խտաներամբ կը զիմեն արդէն այցելունները ,
ընդհանուր գաղափար մը կազմելու եւ վայր-
կենական տպագրութիւն մը կրելու համար :

Ապաւնիացիներն ալ իրենց ցուցադրու-
թիւնները բաժնած են տասնըվեց ճիւղերու
մէջ , մասնաւորապէս գինիներու եւ հանգեր-
ձեղէնի բաժիններուն ուր կարեւոր տեղ մը
կը գրաւեն . ասով հանդերձ , իրենց յատուկ
տաղաւարը ունին՝ շուէտականէն ոչ շատ հե-
ռու , որմէ կը տարբերի սակայն իր հանգա-

մանքովը , երեւոյթովը ու նպատակակէտովը :
Ապանիոյ տաղաւարը այն ինքնատիպ ու նկա-
րագեղ տունը չէ ուր ցուցադրուած ըլլայ Ժու-
զովուրդի մը ներքին կեանքը : Փառաւոր
չէնք մըն է , որ ճարտարագետական խճու-
ղումներ չունի բնաւ . ներս , ապակեգարան-
ներ կան միայն՝ սպանիական հին արուեստ-
ներու ցուցադրութեանց յատկացուած , ճոխ
ու թանկագին նմոյշներ որոնք հիացումով կը
համակեն այցելուն : Կառավարութեան կողմէ
գրկուած պատմական առարկաներէն զատ ,
այնտեղ կը նշմարուին նաեւ մեծահարուստ
անձնաւորութեանց կողմէ ի տես դրուած հա-
ւաքոյթներ (collections)՝ գորգեակներու ,
նկարներու , զրահներու , եւայլն :

Գերմանիա մէկն է այն տէրութեանց
որոնք անցելոյն վերաբերող ցուցադրութիւն-
ներ ունին : Արուեստահանգէսի « ծովային ու
ցամաքային բանակներ » ու պալատին մէջ :
Գերմանական բաժինը , որ կը գտնուի չէնքին
ծայրը , Շան-տըմարտի դարաստանին մուտ-
քին մօտ , կը բաղկանայ միակ սրահէ մը ,
հինգ լայնածաւալ ապակեգարաններով որոնց
մէջ կերեւան բնական մեծութեամբ փայտէ
մարդապատկերներ (mannequins) 1860էն 1865ի
գերման համազգեստներ հագած : Մէկ տպու-
կեղարանը կը պարունակէ արքայական տան
յատուկ համազգեստները . իսկ միւսները՝ բա-
նակինը , պատմական շրջաններու դասակար-
գութեամբ չորս խումբի բաժնուած : Պատե-
րուն վրայ ջրաներկ գծուած են ցուցադրուած
համազգեստներուն պատկերները , որոնց ներ-
քեւ գերմաներէն , անգլիերէն ու ֆրանսերէն
լեզուով արձանագրուած են լիակատար ծա-
նոթութիւններ ասոնց՝ ծագումին ու պատ-
մութեան վերաբերող :

Արուեստահանգէսին գերման պատուի-
րակը , առանց հանդիսաւոր հանգամանք մը
տալու . այս ցուցադրութեան բացումին , մա-
մուի ներկայացուցիչները ու իրեն ազգակից
բարեկամներ միայն հրաւիրած էր : Իսկ բուն
իսկ գերմանական տաղաւարին բացումը մա-
յիս 12ին (Ն. Տ.) է նոյն օրուան վերապահ-
ուած են նաեւ Ամերիկայի ու Մոնաքոյի տա-
ղաւարներուն բացումը , երեք հանգէս միեւ-
նոյն օրուան մէջ , միջօրէէն մինչեւ գիշեր :

Սպասելով որ կարգը գայ անոնց վրայ ալ խօսեցու այս հակիրճ նօթերուն մէջ, կենթադրեմ թէ Մասիսի ընթերցողները անկարեւոր չպիտի դատեն՝ ամբողջ ծանօթութիւն մը ճարտնական ճիւղին վրայ որուն բացումը կատարուեցաւ նախընթաց չարթուն, չուէտա. կանէն ու սպանիականէն երեք-չորս օր առաջ :

Ճարտնական տաղաւարը, որ կառուցուած է Թրքատէրոյի կողմը, մէկ ճիւղն է միայն իրենց ընդհանուր ցուցադրութեանց որոնք կը տեսնուին Արուեստահանգէսին զանազան բաժանումներուն մէջ : Հոս, այս տաղաւարին մէջ, ամբողջուած են միայն իրենց հին արուեստներուն վերարտադրող նմուշներ ու հաւաքածուներ, — ճշմարիտ գանձ մը, զոր կը կազմեն թանգարաններէ, մահաններէ, ապարանքներէ առնուած թանկագին առարկաներ, որոնք զրկուած են պետական արտօնութեամբ : Գարվ անհատական ցուցադրութիւններուն, գաղափար մը տալու համար թէ ճարտին մէջ ինչ խանդավառումով ընդունուած է 1900ի Բարիզեան Արուեստահանգէսին մասնակցելու գաղափարը, յիշեմ միայն սա պարագան : Հազիւ թէ Պ Սօնէ, ճարտին երկրագործական ու առեւտրական նախարարը, արձանագրութեան տոմար մը

բացած էր, եւ ահա՝ 3000 խնդրանքներ կը հասնէին : Բայց որովհետեւ տեղը կը պակասէր, այնպէս մը կարգադրեցին որ միեւնոյն տեսակի պատկանող ցուցադրները հաւաքարար մէյմէկ խումբ կազմեն, ու այսպէսով 1800ի իջուցին այդ թիւը : Ասոնք ցրուուած են Արուեստահանգէսին զրեթէ սակն կողմը, կրթական ճիւղին ինչպէս նաեւ գեղարուեստից ճիւղին մէջ ուր, բացի մետաքսի վրայ կատարուող զուտ ճարտնական նկարչութեանէն, կան նաեւ եւրոպական նկարչութեան արտագրութիւններ որոնցմով կը հաւարտանան ճարտնայինները : մասնակցած են նաեւ մեքենականութեան, էլեկտրականութեան ու ճարտարագիտական ճիւղերուն : Երկրագործական բաժինին մէջ ճարտն ցուցադրած է իր հազուագիւտ ծաղիկներն ու բոյսերը : Սնունդեղէնի եւ հանքային ճիւղերէն՝ զատ, կահ-կարասիներու զարդարանքի բաժնին մէջ ճարտնական 250 ցուցադրութիւն կարելի է զբոնել : Նոյնպէս 530 ուրիշ ցուցադրութիւններ այցելուին աչքին տուեալ կը պարզեն իրենց կապերուն, ոսկերչական արտագրութիւններուն, ոսկեթել բանուածքներուն, կիտուածանկարներուն եւ զանազան ճարտարարուեստներու շքեղ նմուշները :

ԱՐՈՒԵՍՏԱՒԵՐ

ՊԱՍԻՍ, Ի ՅՈՒՇԱՏԵՏԻՐԸ

Ս. Պասիսիսի հօր հետ տեսակցութիւններ ունեցան, չարթուն մէջ, Բաղաքական Ժողովի անդամներէն ոմանք եւ Պատր. Փոխանորդը : Նոյնպէս Տիրան պէյ Տատեան, իր Բարձր. հօր՝ Յարութիւն փաշայի կողմէ :

Ս. Հայրապետը, Թիֆլիզի մէջ իր ունեցած վերջին հիւանդութենէն բոլորովին ապաքինած, էջմիածին վերադարձեր է ուսկից Բիւրականի ամառանոցը պիտի երթայ :

Երուսաղեմ այցելող հայ ուխտաւորներու թիւը, այս տարի, հազարը անցած էր, որոնք Աւագ տօներէն ետքը մեկնած են, հոգեպարար տպաւորութեան մը տակ : Ուխտաւորներուն մէջ կը յիշուի Պագուի մեծահարուստ ազգայիններէն Պ. Գրիգոր Թումանեանց

որ խոստացեր է տարուէ տարի 200 ռուպլի նուիրել Ս. Յակոբեանց վանքին : Աւտորիացի 520 ուխտաւորներ խմբովին այցելել են մեր վանքը ու յարակից հաստատութիւնները :

Մանկավարժական դասախօսութիւններու կարգը, անցեալ կիրակի, Յովսէփ Էֆ. Եւսուփեանին էր որ հմտակից ու զրաւիչ կերպով խօսեցաւ շախմատութեան, զրահաչուական հաւասարութեանց, մեքենագիտութեան եւ աստեղագիտութեան վրայ : Իրեն յաջորդեց Մինաս Էֆ. Ծալեան՝ նիւթ ունեւնալով բարոյական դաստիարակութիւնը :

Հանդէս Ամսօրեայի 4րդ թիւը՝ ամսուան մը յապտուած վերջ՝ հրատարակուեցաւ մայիսի սկիզբը, իր սովորական ճոխ պարունակութեամբ :

Թօնֆաշէն պատահական թղթակից մը Յոշակ կը գրէ մեզի .

«Մասիսի վերջին թիւերէն մէկուն Յուշակ տետրին մէջ Ուրֆայէ գրուած հետաքրքրական նամակ մը կար , զոր կարգալու տետեն նմանօրինակ բան մը յիշեցի : Տեղացի երիտասարդ մը , դեռ 25 տարեկան , իր բնական թափով գործի սկսու , հազիւ 350 ոսկի գրամագլուխով . իր գործելու եղանակը ճշմարիտ վաճառականական գրութեամբ էր , իր անձին վրայ ցոյց տալով հաստատակամութիւն , աշխատութիւն միացուցած ձեռնբեղելեան ոգիի . այդպէս որ դեռ տարին չըտրած իր գրամագլուխը հրաշալիքի մը պէս 1000 ոսկիի բարձրացուց : Հիմա Ուրֆայէ 6000ով 3000 ոսկի շահողը թէ թոքացի 350ով 650 ոսկի շահողը առաւելութիւն ունին իրարմէ բազմապատիւ : Գրածու այնքան ստույգ է որ գրեթէ բովանդակ թոքացիին կը վկայէ սոյն իրողութեան : Զարմանալի չէ՞ք դռներ երբ յարեմ թէ այդ երիտասարդը Արմաշական մըն է եղած : Անպատճառ այս Արմաշի վրայ բան մը կոյ որ թէ՛ վարդապետները եւ թէ՛ վարդապետութենէ հրամարտողները իրենց առաքելներուն մէջ միշտ լաւագոյն տեղը կը բռնեն գրեթէ ամենուրեք : »

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒ

ԴԼԵԱՆՈՐ ՅՈՒՌՈՒՄԵՆՈՒ

ԱՐԵՒԵԼԻՔ , թ. 4307-4308

Տէր եւ Տնօրէն Զ. ԵՈՒՍՈՒՅԵՆԻ

Տիարալքիւրի արաջն. տեղապահ (Խմբագրական) Զ. ԵՈՒՍՈՒՄԵՆԻ . Դեղիկ Այսպիսի Մուշէղ վարդապետ . Բժշկական հարցում մը . Ռ. Զարդարեան : — Զաբը Մոսկուայի մէջ . Արեւ Սպրեհեանց , — Անգլիա եւ Գերմանիա (Քաղաքական տեսութիւն) Զ. Ե . — Մայիսի վարդեր . Կ. Ոսկեան . — Եղեմիոյ մայր եկեղեցիին շինութիւնը . Գ. Կ. Ո . — Այնթապի Գողճը . Ն . — Պալքանեան աղէտը (Նամակ Ֆիլիպէէ) Բ. Զ . — Բարիգի Արուեստահանդէսը . — Բամակի եւ կտաւի առեւտուրը (Նամակ Մանչէսթրի) . — Մոռցուած անկիւններ . Դարազուրազ գիւղը . Յ. Դարբինեան : — Հին ծըրազիր մը նորոգուած . Տ. Ա . — Գրականութեան շուրջ . Արեւ Սպրեհեանց , — Հրկիզեալ քաղաք . Օթալու . — Ռուս կեանքէն . Այս մէտթեանց շուրջ . Արեւ Սպրեհեանց , — «Մամուլը իմ շրջանին մէջ . Ա. Յ. Այնթապեան : — Բանագործութիւն թէ հեղինակութիւն . Նոյն : — Մուրացիկ ստահակը (Իրական պատմութիւն) Աշխատարան :

ԲԻԻԶԱՆԴԻՈՒՆ , թ. 1077-1082
Տէր եւ Տնօրէն Բ. ՔԷՉԵԱՆԻ
Միջազգային կայութիւնը (Խմբագրական) Բիւզանդ . Քեչեան . — Զատիկի Մանչէսթրի Հայոց մէջ . — Տեսնական յիւթեր Թուրքիոյ արհեստները . Խոյի միւս աւ հանրային առողջութիւնը . Յ. Սիմանեան . Կիրակնորեայ դասախօսութիւնը . Գ. Ս . Դաս . մը Այս վաղվաքի կեանքէն (Խմբագրական) . Բ. Քեչեան : — Թղթակցութիւնը Զէյթունէ եւ Սաահայէ . — Սամոնի առեւտր . շարժումը . — Ս . Հեղինէ կղզին : — Կանանց բաժինը . Գարնան ներշնչումներ . Եւսեպի . — Փաթմէ Նիկեար հանր . Պիտրոս Կարապետեան : — Օրուան խօսակցութիւններ . Ե . Պէյազճեան : — Բրոքսթրներուն կոյը (Խմբագրական) . Բ. Քեչեան : — Մեր թերութիւնը . — Սիւսի Մուրսեան . — Բազմախոյրը (Վէպ ազգային ընկերական կեանքէ) Բասիմ :

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ , թ. 353-358

Տէր եւ Տնօրէն Տ. ՃՈՒԼԷԼԵԿԵԱՆԻ

Հակադրութիւն մը (Անցեալի յուշեր) . Տ. Ս. Շաշմեան : — Պալքուրի ազգ . գերեզմանատունը . Ժ . — Ծայրագոյն Արեւելը (Քաղաքական տեսութիւն) Լիւնսի . — 1900ի Արուեստահանդէսը (Նամակ Բարիգէ) Քիւս . — Դասալի կեանքէ (Նամակ Վանէ) . — Հանդիպում . (Թարգմ . գերմաներէնէ) : — Բժշկական Անթթութեան տեսակները . Ա. Ունճեան . — Մակերեւոյթը (Խմբագրական) Զարմաշ . — Հ . Արեւն . Դաղիկեանի թարգմանութիւնները . Գր . Մալխաս : — Քրիկէր նախագահին ճառը . Լիւնսի . — Մայիսի յիշատակներ . Միւնսի Ուղուրեան :

Արսօնսէր Կ. Ս. ԻԻԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. Ս. Տ. Ե. Ս. Ս. Ս.

Կ. Պոլիս, Ֆինանսները եօղուշու , Թիւ 27

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

ԱՐՄԱՇՈՒ ԴՊՐԵՎԱՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Դպրեվանուց Վարչութիւնը կը յիշեցնէ ծանուցանել Արմաշու Զարխափան Ս. Աստուածածնի բարեպաշտ ուխտաւորաց, թէ երթեւեկութեանց դիւրութեան համար պէտք եղած միջոցները ձեռք առնուած են նախկին տարիներու նման :

Հարկ չկայ ըսելու թէ երթեւեկութեանց դիւրութեան համար կարեւոր է Օսմանիէ կամ Համիսիէ քեզիքէ ունենալ ի ձեռին, կայարաններու մէջ ցոյց տալու համար :

Նիկովիդիայէ Արմաշ ճանապարհին ապահովութիւնն ալ կատարեալ է՝ տեղական իշխանութեանց ձեռք առած կարգադրութեանց շնորհիւ, եւ վանքին կողմէ յատուկ պահապաններ կարգուած են ըստ սովորութեան՝ ուխտաւորաց ընկերակցելու համար :

Նիկովիդիոյ մէջ գտնուող վանքին գործակատարները պիտի ջանան ուխտաւորաց պէտք եղած դիւրութիւնները ցուցնել եւ պատրաստել :

(Կնիք Դպրեվանքի Վերահսպումեան)

ՄԱՍԻՍԻ այն ընթերցողները որոնք հաւաքածոյ չեն կազմեր եւ առաջին թիւէն տրամադրելի ունին, ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան իմբագրութեանս՝ զրկելով այդ թիւը զոր պատրաստ ենք գնելու կրկին գինով, որքան օրինակ որ բերուի :



ԷՔԻԹԱՊԼ

Ամերիկեան Ապահովագրական Ընկ.

ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԷՆ ՀԶՕՐԸ

Տնօրէն Թուրքիոյ ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Կ. Պոլիս, Անանիատի խան

Ի դէպ մահու ապահովագրութիւն

Միայն 20 տարեկանով

Մահուան պարագային տարեկանը կը դադրի
(VIE 20 PRIMES)

ՕՐԻՆԱԿ

Տարեք 35, գումար 100,000 Ֆրանք ի դէպ մահու վճարելի

Պրանսական ընկերութեանց թարիֆին համաձայն տարեկանն է	Ֆր. 4140
Էքսթրապոլ ընկերութեան թարիֆին համաձայն տարեկանն է	» 3408
Տարեկան տարբերութիւն ի նպաստ Էքսթրապոլի	» 732
20 տարուան մէջ տարբերութիւն ի նպաստ Էքսթրապոլի	» 14640
100 ին 5 էն բաղադրեալ առկոսով	» 25414

Այսինքն աւելի քան 6 տարեկան խնայողութիւն մը ԻՆՊԱՍՏ ԷՔԻԹԱՊԼԻ

ԿԻՍԱՄՍԵԱՅ “ՄԱՍԻՍ” Ի 1899Ի ՏԱՐԵՇՐԶԱՆԸ, 608 կրկնատիւնակ էջերէ բաղկացած, ճոխ բովանդակութեամբ, իբր ամբողջական հատոր մը թղթակազմ, հրապարակ ելած է եւ կը ծախուի ամէն գրավաճառի քով: Կեդրոնատեղին է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Տպարան: Գինն է 40 զրշ.: Գաւառներէ ուղղողները պէտք է 5 զրշ. աւելի վճարեն իբր թղթատարի ծախք:

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂԻՆ
97 Միլոն

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆՍՅ ՃԻԻՂԻՆ
137 Միլոն

Ընկերութեան զրամատուհն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն

Սիւնոն եֆ. Քալսէրլեան

Կենաց ճիւղին տեսուչ

Միհրան եֆ. Տէր Ներսիսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահտապուրուն խան
Օսմ. Պանքայի դէմ

ԱՌՋԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

ԱՒԵԼԻ ՔԱՆ 25,000 ԲԱՌ, ՈՃ, ԵՒԱՅԼՆ

Այս բառարանին երկրորդ տպա-
գրութենէն հազարաւոր օրինակներու
կարճ միջոցի մը մէջ վաճառուի ամե-
նէն զօրաւոր ապացոյցն է գործին ար-
ժանեաց :

Մասնաւորապէս ֆրանսերէն լեզուն
ուսանողներուն համար պատրաստուած
ըլլալով հանդերձ պիտանի եւ օգտակար
է առհասարակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ,
թուղթի եւ տպագրութեան մաքուր-
թեամբ ու կազմի գեղեցկութեամբ հա-
յերէն հրատարակութեանց ամենէն ա-
ժանը կրնայ կոչուիլ :

Գին զօրաւոր քաղաքին կազմի 25 դր.


Գին ընտիր լաքակազմի 27 դր.

Կեդրոնաւեղին է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը

Ֆինճանճըլար եօզուշու, Կ. Պոլիս

Կը գտնուի ամէն գրավաճառաց քով :



Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մեցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՒՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնաւեղին, Սիւրբէհի, Քէօրրիլիս խան, Թիւ 3

Մասնաւոր, Ղալաթիա, Պէօլիք Միլլէթ խան, Թիւ 33

Գնողներու համար վճարման եւ ամեն տեսակի դիւրութիւններ



ՏՈՒՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ յղային տկարութեանց, ստամոքսի, աղ-
եաց հիւանդութիւններու, ծննդամիզական եւ գաղղիական ախտերու : Բերա, Թաքսիմ փո-
ղոց, Թիւ 10, ամէն օր կէս օրէ վերջը :